

ՊԱՆՏՐՄԱՅԻ ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ԴԱՐՁԸ ՄԱՅՐՆԵՆԻ Ե-
ԿԵՂԵՑՈՒ ԵՈՑԸ

«Բիւզանդիոն» լրագիրը հաղորդում է, որ Պանտրմայի 14 հայ-կաթոլիկ ընտանիքներ, 54 հոգուց բաղկացած, որոնք 11 տարի առաջ կաթոլիկութիւն էին ընդունել, այս օրերս դարձել են Հայաստանեայց ս. եկեղեցու գիրկը՝ Տ. Թաթուլ վարդապետի ջանքերով և այս առիթով հարկ եղած օրինական ձևակերպութիւնները կատարուել են արդէն: Հ. Թաթուլ վարդապետին այս բանի մէջ նպաստել են փաստաբան Յարութիւն Ուզունեան և ուսուցիչ Թագուօր Շիրինեան, որոնք հայր սուրբի խրատներին անսալով՝ վերջ են տուել յիշեալ բաժանման և ամենքը միասին դարձած են Հայ եկեղեցու ծոցը:

ՕՐ. ԱԼԻՍ ԲԼԷԿՎԷԼ

Օր. Ալիս Բլէկվէլը, որ անյայտ չէ մեր բնթերցողներին իւր զանազան թարգմանութիւններով հայերէնից անգլիերէն լեզուի, վերջերս մեծ եռանդով սկսել է մի գեղեցիկ ձեռնարկութիւն, այն է՝ հայ նշանաւոր բանաստեղծների երկերը անգլիերէնի թարգմանել և հրատարակել Բօստօնի «Boston Post» լրագրում և նոյնտեղի հայերէն «Վոչնակ» շաբաթաթիւթում:

Վերջերս մեր խմբագրութեան մէջ հետզհետէ ստացուեցին օրիորդի հետեւալ թարգմանութիւնները.

Յ. Յովհաննիսեանի «Armenian Song» և «Let your song boil with fire of ardent wrath» բանաստեղծութիւնների թարգմանութիւնը տպուած «B. Post»-ի մէջ:

ՄՂՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻ ՈՂԲԱԼԻ ՎԻՃԱԿԸ

«Արևիկ» օրաթերթի սեպտ. 9 համարում տպուած Մուշից հաղորդուած մի թղթակցութիւնից քաղում ենք հետեւալ տխուր տողերը.

Մշոյ ս. Կարապետ մենաստանի նիւթական և բարոյական հաստատութիւնները քայքայուող վիճակի մէջ են: Շէնքերի փուլումները հաստատուած իրողութիւն է և եթէ կարկատաններ ու վերանորոգութիւններ չլինին՝ թերևս աշնան անձրևներին՝ քարուքանդ պիտի լինին և Մշոյ ս. Կարապետն էլ պատմական վանքերի կարգը կյիշուի—Գալով բարոյական հաստատութեան, այն է որբանոց վարժարանին, ուր 55-60 որբ սաներ է դաստիարակուում, այն էլ այսօր փակուում է՝ ի մեծ դժ-